ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2026 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի №269Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍԻՐԱՐՓԻ ԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մայիսի 15-ի №ԽԱ-15 գրությունը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 25-ի «ՍԻՐԱՐՓԻ ԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՍԻՐԱՐՓԻ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №269Ա որոշմամբ «ՍԻՐԱՐՓԻ ԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «ՍԻՐԱՐՓԻ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0406 լիցենզիայի գործողության ժամկետը, որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2026 թվականի մայիսի 25-ը» բառերը փոխարինել «մինչև 2041 թվականի մայիսի 25-ը» բառերով,

2) 1-ին կետում «Ծաղկավան համայնքում» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Ծաղկավան համայնքի» բառերը փոխարինել համապատասխանաբար «Բերդ համայնքում (գյուղ Վերին Ծաղկավան)» և «Բերդ համայնքի (գյուղ Վերին Ծաղկավան)» բառերով:

2. «ՍԻՐԱՐՓԻ ԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «ՍԻՐԱՐՓԻ» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա ժամկետն ավարտվում է 2026 թվականի մայիսի 25-ին,

2) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված (ավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ինչպես նաև արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մայիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- մայիսի 2026թ.